

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

05.05.2017

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

### ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:  
/Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/
2. Նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում: /Ձեկուցող՝ Ա. Ներսիսյան/
3. «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Վահան Արշակի Աղաբանյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելուն երաշխավորելու հարցը /Ձեկուցող՝ Վ. Ավագյան/:
4. Ընթացիկ հարցեր:

### ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումները իրականացվել են ժամանակացույցի համաձայն: Շեշտվեց, որ ֆակուլտետի դասախոսները նկատելիորեն կատարելագործել են թեստերը: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին և տարաձայնություններ չեն եղել:

Ձեկուցողը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը.

Պատմություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.45 վճարովի և 3.29 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.44, իսկ անվճարում՝ 7.82 միավոր:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.16 վճարովի և 2.88 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.13, իսկ անվճարում՝ 7.71 միավոր:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 1-ին կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.50 վճարովի և 3.25 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.41, իսկ անվճարում՝ 8.50 միավոր:

Հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.48 և 6.21 միավոր:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.94 վճարովի և 3.70 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 7.86, իսկ անվճարում՝ 8.94 միավոր:

Օտար լեզու և գրականություն մասնագիտության 1-ին կուրսում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.17 միավոր վճարովի և 3.04 անվճար համակարգում:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.57 վճարովի և 3.61 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.24, իսկ անվճարում՝ 8.88 միավոր:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.17 վճարովի և 3.31 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.15, իսկ անվճարում՝ 8.23 միավոր:

2016-2017 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.43 վճարովի և 3.26 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումներից վճարովի համակարգում կազմել է 6.41, իսկ անվճարում՝ 8.12 միավոր:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

*Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:*

### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

*- 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:*

### **ԼՍԵՑԻՆ.**

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողը մանրամասն ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը և նախապաշտպանությունների արդյունքները: Նա նշեց, որ նախապաշտպանությունների արդյունքում որոշ աշխատանքների կատարման ընթացքում ուսանողների մոտ ծագել են խնդիրներ և դժվարություններ: Նկատված թերությունները հնարավոր միջոցներով շտկվել և վերացվել են:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 29 ուսանող, իսկ ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ՝ 10 ուսանող: Ըստ զեկուցողի հաղորդման՝ ուսանողների գերակշիռ մասը կատարել է աշխատանքի 50-60%-ը:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 18 ուսանող, որից 9-ը՝ հայոց լեզվից, 9-ը՝ հայ գրականությունից: Ուսանողների ճնշող մասը կատարել է աշխատանքի 50%-ը:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությունից ավարտական աշխատանքի թեմաները բավականին հաջող են ընտրված և արդիական են: Դրանք գերազանցապես ունեն կրթաբանական բնույթ: Ավարտական աշխատանք է գրում 19 ուսանող: Ուսանողների մեծագույն մասը հասցրել է կատարել տեսական

գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն, արդյունքների քանակական վերլուծություն: Նրանք գտնվում են վերջնական վերլուծությունների և եզրակացությունների շարադրման փուլում:

Պատմություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 17 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է: Կան ուսանողներ, որոնց աշխատանքի կատարման ընթացքը անբավարար է, նրանց հետ պետք է տարվի անհատական օգնության աշխատանք:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել, հանդիպել նրանց գիտական ղեկավարներին, հարկ եղած դեպքում այս գործում ներգրավել նաև ամբիոնի այլ դասախոսների:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

*Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ռ. Միրզոյանը, մ.գ.թ., Լ. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Մարհատյանը:*

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*2016-17 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը համարել բավարար:*

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Վ. Ավագյանը ներկայացրեց «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, Բ.գ.թ. Վահան Արշակի Աղաբաբյանի դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին մասնակցելուն երաշխավորելու հարցը: Վ. Ավագյանը հայտնեց, որ հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» բաժնի «Բ»

ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին: Նա երաշխավորվում է մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին: Ամբիոնը դիմում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդին՝ հաստատելու ամբիոնի նիստի որոշումը: Վ. Ավագյանը ծանոթացրեց հայցողի անձնական գործի նյութերին՝ նշելով հետևյալը. «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Արշակի Աղաբաբյանը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում վեց տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Նա մեծ հաջողությամբ դասավանդում է մասնաճյուղում:

Վահան Արշակի Աղաբաբյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2013թ.: Վերջին տարիներին նա հրատարակել է 1 մենագրություն, 1 ուսումնամեթոդական աշխատանք, 1 մեթոդական ձեռնարկ և 14 գիտական հոդված:

Նա արհեստավարժ դասախոս է, ունի գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքների մեծ փորձ, հմուտ և գործիմաց է, կարողանում է հետաքրքրություն առաջացնել դասավանդվող նյութի նկատմամբ: Վահան Արշակի Աղաբաբյանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների վերջին հինգ տարիների միջին արդյունքը կազմում է 4,77 բալ:

Հաշվի առնելով այդ ամենը Վ. Ավագյանը նշեց, որ բ.գ.թ., ասիստենտ Վահան Արշակի Աղաբաբյանը լիովին արժանի է դոցենտի գիտական կոչման և առաջարկեց հաստատել «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի նիստի որոշումը և նրան երաշխավորել մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին:

Այնուհետ Ա. Ներսիսյանը հարցը դրեց ֆակուլտետի գիտխորհրդի քննարկման:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

–Պ.գ.թ. Ս. Առաքելյանը, բ.գ.թ. Ա. Սարհատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ. Զ. Հարությունյանը, բ.գ.թ. Ա. Հասանյանը:

Արտահայտվողները առաջարկեցին երաշխավորել Վահան Արշակի Աղաբաբյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին և հարցը դնել բաց քվեարկության:

Բաց քվեարկությամբ միաձայն որոշվեց.

***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*ա/ Հաստատել «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի նիստի որոշումը և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Վահան Արշակի Աղաբաբյանին երաշխավորել մասնակցելու դոցենտի գիտական կոչում ստանալու համար սահմանված գործընթացին,*

*բ/ Դիմել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Գիտական խորհրդին՝ միջնորդել ԵՊՀ խորհրդի առջև բ.գ.թ. Վահան Արշակի Աղաբաբյանին շնորհելու դոցենտի գիտական կոչում:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ներսիսյան

Վ. Աղաբաբյան